ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, Հեռ. (0234) 2-33-32, (0234) 2-37-71, Ֆաքս 0234 2 45 46, vedi.ararat@mta.gov.am, vedimeria@rambler.ru

Մետադոր ՍՊԸ -ի տնօրեն
պարոն Մ. Բաղրամյանին

Ծանուցում

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Վեդու համայնքապետարանի և Մետադոր ՍՊԸ–ի միջև 2021 թվականի սեպտեմբերի 3-ին կնքվել է<< Արարատի մարզի Վեդի համայնքի Կասյան 26/12, 26/13, 26/14, 26/15, Արարատյան 38, 40 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներում խաղահրապարակների և Արարատյան 55 հասցեում գտնվող պուրակի բարեկարգման աշխատանքներ>> *ՀՀ ԱՄՎՔ-ԳՀԱՇՁԲ-21/10»* ծածկագրով գնման պայմանագիրը՝ 47.120.000 (քառասունյոթ միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ պայմանագրային գումարով: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 60 օրացույցային օր: Հիմք ընդունելով պայմանագրի 8.8 կետը 01.11.2021թվականին կնքվել է թիվ 2 համաձայնագիրը: Աշխատանքների կատարման ժամկետը երկարացվել է 30 օրացույցային օրով և աշխատանքների ավարտման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. դեկտեմբերի 6-ը: Մինչ օրս (19.01.2022թ.) պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն ավարտվել: Կատարած աշխատանքների մասով ներկայացվել է կատարողական ակտ, հանձնման–ընդունման արձանագրություն և կատարվել է վճարում: Հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետը՝պատվիրատուի կողմից պայմանագիրը աշխատանքների չկատարած մասով մասնակի միակողմանի լուծվում է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ